

**ՍԵՐԳԵՅ ԱՂԱՋԱՆՅԱՆ  
Բանասիրական գիլությունների թեկնածու**

## **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԱՍՍՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ ԱՐՁԱԿՈՒՄ**

Հասարակական կյանքի շրջադարձային փոփոխությունները հաճախ հնարավոր են դարձնում գրական երկերի նորովի ընթերցումը կամ նրանցում կենսական նոր հանգամանքների մտածողությանը համարումն ենթատեքստային շերտերի կարևորվելը: Գեղարվեստական ստեղծագործությունում ենթատեքստի առկայությունը սովորաբար պայմանավորված է լինում երկու հանգամանքով: Առաջին դեպքում, եմենով ինչ-ինչ մկատառություններից, հեղինակը գիտակցաբար հնարավորինս թաքցնում, երկրորդ պլանում է պահում իր համար կարևոր ասելիքը կամ դրա մի մասը: Մյուս դեպքում հեղինակի միտումնավորությունը բացակայում է: Նա, առաջնորդվելով կենսական նյութի ճշմարտացի արտացոլման սկզբունքով, հասնում է իրականության այնպիսի ընդգրկման, որից ինքնին բխող ոչ բոլոր եղանակացությունները կարող են համընկնել իր համոզմունքներին: Դրանք կենսական օբյեկտիվ ճշմարտություններն են, գրական երկի այն բաղադրիչը, որը մանավանդ նոր ժամանակների մեջ հնարավոր է դարձնում նրա վերընթերցումը: Իրապատում արվեստի, մանավանդ գրականության համար ոչ տարօրինակ, բայց հետաքրքիր այս երևույթը կարելի է բնորոշել որպես հեղինակի ակամա, չնպատակադրված թերասացություն:

Այս առումով հետաքրքիր գեղարվեստական իրողություն է Գուրգեն Մահարու ստեղծագործության երկրորդ շրջանի<sup>1</sup> փոքր արձակը: Դա բոնադասվածության տարիների կենսափորձով շարադրված նովելի, պատմվածքի, վիպակի ժանրերով մինազամայն նոր խոսք է գրողի ժառանգության մեջ: Ըստ արտացոլվող կենսական նյութի՝ դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ սիրիոյան տաժանակրության և աքսորի տարիների պատկերները: Հակառակ կենսագրական փաստի ժամանակագրական հաջորդականության՝ նա սկզբում (հիմնականում 1950-ականներին) շարադրել է աքսորական կյանքի իր գեղարվեստական պատկերները, ապա՝ տաժանակրության (1960-ականներին): Մենք այդ հաջորդականությամբ էլ կփորձենք դիտարկել թերասացության խնդիրը Գուրգեն Մահարու ստեղծագործության երկրորդ շրջանի վերոհիշյալ ընդգրկումներով գործերում:

Աքսորական տարիների փորձով Գ. Մահարու շարադրած պատմվածքներն ու նովելները հետևյալներն են՝ «Արջը ծխամորճով» (1956), «Ար» (1956), «Անմեղ մեղավորներ» (1956), «Մի անգամ գերեզմանատանը» (1956), «Մաքուր խոճի համար» (1957), «Ողբերգություն թոշնամոցում» (1957), «Նախօրյակին» (1961): Այս խմբի մեջ պետք է դասել և «Ա-

<sup>1</sup> Գ. Մահարու սկիզբագործության վերաբերյալ մենագրությունները (Ս. Աղարայան՝ 1959 թ., Գր. Շահինյան՝ 1964 թ., Կ. Աղարենյան՝ 1975 թ., Ս. Բողոսյան՝ 1981 թ.) շարադրված են նրա երկների ժամանակագրական վերլուծության սկզբունքով: Դա էլ իհմը է դարձել նրա սկիզբագործությունը փամանակրության և աքսորի համարյա անապուու գարիններին (1936-1954 թք.) նախօրդող և հաջորդող շրջանների բաժաննուն:

տառային մերիաբ» պատմվածքը, որը շարադրվել է ավելի ուշ՝ 1966 թվականին:

Հարկ է նշել, որ նովելների և պատմվածքների այս փոքրիկ խումբն աննկատ չմնաց: Ակնառուն անմիջապես բարձր գնահատվեց՝ ոուսական հատկապես ձմեռային բնանկար, ոուս մարդու նկարագիր և կենցաղ, ժամանակի խորհրդային իրականությանը բնորոշ հարաբերություններ, մարդկային բարդական խնդիրների առաջադրում, շարադրելու զվարյան և այլն: Սակայն, չնպաս գրականագիտական իր խորաթափանց հայացքին, Ս. Աղաբարյանն այս ստեղծագործությունները գնահատում է հավանցիկ՝ դրական կերպարների մեջ առանձնացնելով կյանքը գեղեցկացնելու և բովանդակալից դարձնելու ձգտումը, իսկ բոլոր կերպարների ամբողջության մեջ՝ «սովետական ժողովրդի կյանքի տարեգործությունը»<sup>2</sup>:

Հպանցիկ են նաև Ս. Բողովյանի դիտարկումները<sup>3</sup>: Անհամեմատ մանրակրկիտ և ըստ էության են Կ. Աղաբեկյանի<sup>4</sup> և Գր. Շահինյանի<sup>5</sup> վերլուծությունները: Դրանց ուզում ենք հավելել հետևյալը: Գ. Մահարու այդ պատմվածքները արձակում իր կայացածության նորովի հավաստումն էին, իսկ որ ավելի կարևոր էր՝ ժամանակակից թեմատիկայում ևս մնացում գործեր ստեղծելու լուրջ հայտը:

«Նախօրեին» շարքի կենսական ճշմարտացիությունը կասկածի տեղ չի թողնում: Հենց այդ ճշմարտացիությունն է, որ մերօրյա դիտարկման ժամանակ առիթ է տալիս որոշ եզրակացությունների, որոնք կարող էին և չիման հետինակի ստեղծագործական ծրագրում: Այսինքն՝ արտացոլված իրականությունը, որ համոզչության պակաս չունի, ինքնին հուշում է մի ճշմարտություն, որը չի համընկնում ժամանակի պաշտոնապես ընդունված, հետինակի համար նույնապես ընդունելի ճշմարտությանը:

Գր. Շահինյանը «Նախօրեին» շարքի վերաբերյալ ունի մի հետաքրքիր նկատառում: Այն հետևյալն է՝ «Հակառակ, սակայն, հետինակի զուարժախտի այս կեցուածքին, «Նախօրեին»-ի մթնոլորտը առհասարակ պրկուած բան մը ունի... Կիհմայի եւ տեղի դաժանութիւնը, բիրու մարդերու ներկայութիւնը իրար կը լրացնեն կարծես ստեղծելու համար մթնոլորտ մը, որ երեսմ նեղացուցիչ է, ուրիշ աստեմներ՝ պարզապես հեղձուցիչ: Կարծես կեանքի մութ, խորհրդաւոր ուժերը քաղաքակրթութեան կապանքներէն եւ ընկերային ընթացիկ սովորութիւններէն ներբազատուած՝ ազատ ասպարեզ գտած են»<sup>6</sup>: Գուցե մի քիչ խիստ ու ավելի ազատ է ասված, քան թուլաստրելի էր խորհրդային երկրի գրականագետին: Բայց արձակագրի ներկայացրած իրականությունը դրա առիթը տալիս է:

Ավագը փաստարկելու համար ուզում ենք առանձնացնել «Մաքուր խաճի համար», «Ողբերգություն թոշնամոցում» և «Նախօրյակին» պատմվածքները: Սրանցում ներկայացվում են կոմկրետ մարդկային ճակատագրեր ու փոխհարաբերություններ, վարքի առանձնահատկություններ, որոնց բնույթը, բովանդակությունը հետինակը պայմանավորում, պատճառաբանում է առաջին հերթին կենական հանգամանքներով, հասարակական հարաբերությունների ու պատմական իրականություններով,

<sup>2</sup> Աղաբարյան Ս., Գորգն Մահարի, Ե., 1959 թ., լզ 147-148:

<sup>3</sup> Բողովյան Ս., Գորգն Մահարի, Ե., 1981 թ., լզ 133-134:

<sup>4</sup> Աղաբեկյան Կ., Գորգն Մահարի, Ե., 1975 թ., լզ 201-208:

<sup>5</sup> Շահինյան Գր., Գորգն Մահարի, Պէյրութ, 1964 թ., լզ 120-128:

<sup>6</sup> Նոյն տեղը, լզ 121:

որոնց մեջ ակամա հայտնվել են այդ մարդիկ: Այստեղ հետաքրքիրն ու կարևոր հետևյալն է: Մահարու հերոսները գիտակցում են, որ իրենք լավ բանի չեն, որ իրենց վարքի ու նկարագրի մեջ շատ բան մարդկային սահմաններից դուրս ու մերժելի է: Ոչ մի հասարակարգում շարքային, սովորական քաղաքացին երբեք ավելի լավը չի եղել, քան դրա հնարավորությունը կարող է տալ նույն այդ հասարակարգն իր կենսական հանգամանքներով: Դրա համար էլ Գ. Մահարու հերոսները հենց այն են, ինչ կարող էին լինել 1950-ականների խորհրդային մարդիկ: Անմա այդ մարդկանցից մեկն է՝ «Մաքուր խոճի համար»-ի հերոսը: Խորհրդային աշխատավոր գլուխացին իրեն վատահիված ցորենից գողանում-է, որ հոգա իր հանապազօրյա կարիքները: Բայց դա անում է վախով, սրտի դողով, չկամությամբ: Իսկ երբ դրամից հրաժարվելու նվազագույն հնարավորություն է ստեղծվում, ունենում է հանգիստ խոճով ապրելու ուրախություն:

Իրերի բնույթին պաշտոնական-գաղափարախոսական տեսանկյունից նայող մեկ ուղի հեղինակի գոչի տակ դեպքը գուցն իմաստավորվեր միտումնավոր վնասարարության և սովետական համակեցությանը խորթ տարրի կրքու մերկացումով: Գ. Մահարին այլ ճանապարհ է ընտրել. սոցիալ-բարոյական պրոբլեմը դիտարկել է պատճառի, գնահատելուց առաջ՝ խորքը տեսմել-հասկանալու տեսանկյունով: Արդյունքում ստացվել է հերոս, որը հանգամանքների պարտադրանքի գործ է: Այդպիսի կերպարներ կան նաև «Ողբերգություն թոշնանցում» և «Նախօրյակին» պատմվածքներում:

Կա կերպարների մի այլ խումբ էլ, որը կարելի է անվանել կենսական հանգամանքների, այսինքն՝ հասարակական հարաբերությունների թույլտվությամբ ակտիվացած հանգագործների խումբ: Սրանք արդեն գործեր չեն, այլ ժամանակի շապիկը հագած ինտրիգաներ, գողեր, բարոյագոլոցներ: Ու բոլորն էլ՝ իրենց բնակավայրի մասշտաբներով պաշտոնյամեր, նյութական պատասխանատուներ: Բնորոշ է հատկապես «Նախօրյակին» պատմվածքում մերկայացված իրավիճակը: Կոլտնտեսության նախագահը, գոյացած կոնֆլիկտից խուելու վիճարեն, հերթապահ, ամենքին հայտնի և վերացական խոսքերով ճամարտակում է կումունիզմի մասին: Դրանք այն խոսքերն են, որոնք միշտ ասվել են լսողների համար. ասողները չեն հավատացել, առավել ևս, երբեք չեն ապրել ըստ այդ խոսքերի: Իսկ լսողն էլ, այս դեպքում կոլտնտեսության դարբինը, ոչ մի կերպ չկարողանալով գլուխ համել նախագահի վերամբարձ բառակություն, դրանում չգտնելով իրեն տաճող խնդրի լուծումը, դառնացած ձևակերպում է իր ներսում հասունացած կասկածը. «Մի տեղ մի ծոյն բան կա, Պավել,- շարունակեց դարբինը դատարկ բաժակը սեղամի վրա թիսկացնելով,- մի տեղ մի ծոյն բան կա, այդ ծոյն տեղը պիտի ուղղվի և ամեն ինչ կարդի կօք: Գլխի չեմ ընկնում, Պավել, թե ո՞րտեղ է այդ ծոյն տեղը» (3,272): Այս պատմվածքներում մի քանի տեղ Գ. Մահարին օշում է, որ իր նկարագրածը «Հայթանակ» կոլտնտեսության առօրյայից է: Ուշադիր ընթերցելու դեպքում անհնար է չնկատել, որ կոլտնտեսության անունը ներկայացված կենսակերպի ծաղըն է: Ծիշտ է նաև հակառակը:

Մամավանդ՝ «Նախօրյակին» պատմվածքում Գ. Մահարին առաջարած լուրջ սոցիալ-

<sup>7</sup> Այսպիսն և այսուհետ առաջին թվանիշը Գ. Մահարու Երկերի մողովածուի հինգհատորյակի համապատասխան հագործի, երկրորդը՝ լցի համարն է:

բարոյական խնդիրները տեղափոխում է զուս բարոյական լուծումների հարթություն: Դա համարունչ էր խորչշովյան վերագնահատումների շշամի գաղափարախոսական մթնոլորտին: Գոյացած բոլոր պրոբլեմները (և տնտեսական, և մարդկային բարոյական նկարագրի ու վարքի) դիտարկվում են ոչ թե որպես առկա հասարակական կարգ ու կեցություն, աշխատանքային դրվածքի ու հարաբերությունների արդյունք, այլ իրեն շեղում: Մեղադիքը են անհատները: Ոչ այն կենսակերպը, որ հնարավոր է դարձնում այդպիսի անհատների գոյությունը և ակտիվ գործունեությունը, մարդկանց վարքում արատների մասայականությունը, այլ անհատները:

Անտեսվում էր, որ մինչև կարդի աստիճան կարնորվող այդ անհատները հասունանում էին տվյալ երկրում իրենց կուտակած փորձով: Այս կարևոր հանգամանքի անտեսումն է խնդիրը հանգեցվում է բարոյախոսական լուծման՝ «խղճի տնտեսությունը» (3, 297-300) կարգի բերելու գաղափարին:

Սա հեղինակի համոզմունքն էր, թե՞ անխոսակիելի տուրքը ժամանակին, դժվար է ասել: Մի բան ակնհայտ ու անկասկած է: Այս գրականությունն անկեղծ հավատով, վատը հաղթահարելու ակնկալիքով, մանավանդ շարքային քաղաքացու համար մտահոգությամբ ստեղծված գրականություն է: Ուղիշ բան, որ հատկապես մեր օրերում այն արդեն չի կարող թաքցնել իր քաղաքական միամստությունը:

Նույնքան դժվար է այս քննել այն հարցը, թե որքան է Գ. Մահարուն զբաղեցրել իր ստեղծագործության ներառելքստային ճշմարտության խնդիրը: Սակայն այսօր այդ պատմվածքները զգալիորեն վերահմատավորված են ընկալվում: Մարդու վերափոխումը, հակառակ սոցիալական հանգամանքների, չի համոզում, իսկ կենսական այն հանգամանքները (խորհրդային), որոնք մարդուն դարձնում կամ թուլատրում էին դառնալ այդպիսին, ակնհայտ են ու մերժելի:

Հեղինակի ակամա թերասացության հետաքրքիր օրինակներ են նաև տաժանակրության տարիների կենսափորձն արտացոլող ստեղծագործությունները: Դրանք են «Շաղկած փշալարեր» (1965) վիպակը, «Ան մարդը» (1960), «Հայկական բրիգադ» (1964), «Գիշեր» (1964), «Մշեցի Առաքելը և ուրիշները» (1965) պատմվածքները: Սրանցում խորհրդային իրականությունը ներկայանում է մի այլ երեսով, կենսական այլ հանգամանքներով: Ակնհայտ և ինքնամատուցվող է հեղինակի գաղափարական նպատակադրումը: ցուց տալ տաժանակրության աներևակայելիորեն անմարդկային պայմանները, և թե ինչպիսի ճիզ ու ջանք են գործադրում առավելապես համիրավի դատապարտված բանտարկյալները՝ չկորցնելու համար իրենց մարդկային մկարագիրը:

Մինչ քննադատության մեջ այս ստեղծագործությունների գմանադատականներին անդրադառնալը նշենք, որ վերևում բերված շարքից պետք է դուրս թողնել «Հայկական բրիգադ» պատմվածքը: Ծիշտ է, այդ ստեղծագործության հյութն էլ առնված է տաժանակրության տարիների փորձից, բայց այն իմաստավորելու հեղինակային մտահացումը միանգամայն այլ է: Այստեղ ներկայացվող անզատության մթնոլորտն արտակարգ, ոչ սովորական իրավիճակ է, որի մեջ էլ դիտարկվում են հայի ազգային հոգեբանական նկարագրին ու վարքի առանձնահատկությունները: Դրանք Գ. Մահարին վարպետորեն ներկայացնում է զուգադրվող երկու տեսանկյունով: Առաջինն իրենց է, երկրորդը՝ այլազգի,

կողքից նայող մարդկանց գնահատականը վարքի նույն դրսերումներին: Առաջինը երևության ներքին, օբյեկտիվ ճշմարտությունն է, այն, ինչը ցավեցնելու աստիճան անվիճարկելի է պատմական փորձի առումով: Երկրորդն այդ ճշմարտության շիմացության հետևանք է, ազգային Ակարագրի մասին առկա կանխակալ կարծիքի հերթական դրսերում: Դրա համար էլ երկրորդը կատարյալ զավեցտ է՝ փաստի օբյեկտիվ բովանդակության և նրա գնահատականի բացարձակ անհամապատասխանության ձևով: Ազգային հոգեկերտվածքին բնորոշ հատկանիշների դիպոլ բացահայտումների այս պատմվածքը քննարկման հետաքրքիր նյութ է, սակայն ոչ քիչ առաջ նշված ստեղծագործությունների շարքում:

«Ան մարդը» պատմվածքը նույնականացնելու տարրեր է վերը նշված խմբի ստեղծագործություններից: Այդ տարրերությունը զիմավորապես պայմանավորված է Ստալինի մահվանից հետո խորհրդային իրականության մեջ ձևավորված սպասողական մթնոլորտով: Ծիծու է, ողն օրի լցվում էր համեմատաբար ազատ խոսքի, պետության կառուցման գործում թույլ տրված սխալների քննադատության տրամադրություններով, սակայն դեռ ճշտված չէր այդ ազատության թույլատրելի սահմանը: Տասնամյակների դառը փորձը ճշմարտությունն ասելու ձևի ու չափի որոշակի զավածություն էր պարտադրում: Համեմայն դեպք, նույնիսկ այդ զգուշավորությամբ հանդերձ էլ, «Ան մարդը» նշանակալի փաստ էր ժամանակի հայկական արձակում, որի շնորհիվ էլ աննկատ չմնաց: Նրա մեջ բարձր գնահատվեց հենց այն, ինչ Գ. Մահարին ընդգծել էր՝ «գրականության և կյանքի կապը», ժամանակի համար նշանակալի «հերոսը» (3, 204-205): Ե՛վ խորհրդային, և՛ հետխորհրդային վերլուծությունների առանցք են դարձվել Աշոտ դայի, Սանո և Լյալյա եղյակի փոխհարաբերությունները: Սանոյի բարոյական վերածննդի համոզչությունը փաստարկվել է Աշոտի ազնվացնող կենսորոշումներով ու ժողովրդական բարոյականության փիլիսոփայությամբ և Լյալյայի պահանջնորդ սիրով: Կյանքում հնարավոր եզակին համոզիչ դարձնելու համար Գ. Մահարին վարպետորն մտահղացել է դաստիարակչական իրավիճակներ, որոնք ֆիզիկական ու բարոյական ապտուկներ են կարծես թե անհանալիորեն կործանված Սանոյին: Դրանց մեջ պարտավորեցնելու իմաստով ամենավերջինն ու Սանոյի համար ամենաանշրջանցելին Լյալյայի մահն է: Եվ Սանոն վերագրնում է մարդկային իր նկարագիրը:

Ակնհայտ է հեղինակի կանխադրությը. նույնիսկ ամենաանմարդկային պայմաններում էլ (մարդկային Ակարագիրը պահպանելն արդեն իսկ հերոսական շանք էր պահանջում) հնարավոր է մարդկային Ակարագիրի վերականգնումը: Ու մարդը հենց դրանով է մարդ: Ֆիզիկական ու բարոյականութեանական ոչնչացման կալանավորական կենսապայմանները պատմվածքի այն համայնապատկերն են, որով ավելի է ընդգծվում հեղինակի ասելիքը:

Սակայն իր ժամանակի համար բացախտության թույլատրելի սահմաններում երևակի այս պատմվածքի մեջ մտահղացման և կատարման առումով ամեն ինչ չէ, որ անթերի է: Գր. Ծամինյանը, գեղարվեստական լուրջ ձեռքբերում համարելով այն, որոշ անհամոզչություն է մատնանշում Սանոյի կերպարում. «Ծուտ կը փոխուի, շա’տ շուտ կը բարեփոխ-

ի»<sup>8</sup>: Իր ողջ հմայքով հանդերձ՝ բարոյակարտական կեցվածքի ավելցուկ ունի Աշոտ դայու կերպարը: Մի բան, որը կերպարի մկարագրի մեջ հաղթահարվել է հաջորդ ստեղծագործություններում: Տեղին է նշել, որ Աշոտ դային Գ. Մահարու արձակի ամենահամապատահակիո, լուսավոր կերպարներից է<sup>9</sup>:

Այս ամենով հանդերձ՝ կարծում ենք, պատմվածքի ամենաթույլ տեղը մտահղացման, կենսական զյութը գեղարվեստական փաստի վերածուու հետինակային տեսանկյան մեջ է: Կենսական զյութը համապետական աղետն է, համիրավի բռնադատված միլիոնավոր մարդկանց ճամբարային կյանքը: Մահարին ունի հրաշալի պատկերներ, որոնք եթե ոչ ամբողջական, ապա գոնք ունալ պատկերացում են տախու տաճանակրության հոգերանական ու ֆիզիկական սարսափերի վերաբերյալ: Այս մշնոլորտում ավելի օրինաչափը, անգամ հակառակ բռնադատվածի կամքի, եթե ոչ բարոյազրկումը, ապա հաստատագեն բարդական ոչնչացումն է հատուկ մտածված մեխանիզմով: Ինարկե, չի բացառվում և Սանոյի տարբերակով վերածումնը: Բայց երբ Գ. Մահարին առաջինը, օրինաչափը թողած, մատու դնում է երկորդ տարբերակի՝ քիչ հավանականի վրա, անսապոելի ողբերգականության հասարակական-քաղաքական պրոբլեմը մերկայացնում դաստիարակչական-բարդայիրատական շեշտադրումներով, անպայման կորցնում է իր սուր մտքին ու դիտողականությանը բնորոշ որակից էական մի մաս: Այլապես ավելի հետևողական լինելու դեպքում պետք է ընդունենք, որ կյանքի և գրականության կապը հաջողությամբ դրսևորվեց ոչ թե մասսայական բռնադատության, լլկման ու տաճանամահության, այլ այդ մշնոլորտում մի եզակի բարյալական մաքրման արտացոլմամբ: Իսկ ժամանակի գրական հետուն էլ հենց այդ վերածնված մարդն է (այն էլ տաճանակրության պայմաններում) և ոչ թե բարձրաձայն անգամ հատաշելու, բողոքելու իրավունքից զուրկ միլիոնները: Եթե մեզ թույլ տանք մահարիաբար հեգմել լուրջ բաները, ապա կարող ենք հոչակել մոտավորապես այսպիսի մի կարգախու: «Կեցցե տաճանակրությունը, որն անկյալին մարդ է դարձնում»: Եթե Գ. Մահարին այլ տեսանկյունով ճայեր իր նյութին, այսինքն՝ ավելի շատ տեղ հատկացներ տաճանակրության անմարդկային էությունը բացահայտելուն, իսկ դրա մեջ նաև՝ մարդ մնալու հատ ու կենտ հաջողված ջանքերին, ապա ստեղծագործության գեղարվեստական համոզչությունը կասկած չէր հարուցի:

Սխալ չհասկացվելու համար մի անգամ ևս ուզում ենք նշել, որ ողջ ասվածը ոչ այնքան Մահարուն է վերաբերում, ով թեև որոշ զգուշավորությամբ, ժամանակի պատվերին հարմարվելով, թուլատրելի սահմաններում, համենայն դեպքու, փորձում էր խորհրդային իրականության ամենառողերգական իրողություններից մեկը գրականության միջոցով հանրության համար դարձնել ճանաչելի նյութ: Ասվածն ավելի շատ վերաբերում է գրականագիտությանը, որ վերագնահատումների հնարավորությունը բաց թողնելով՝ դարձյալ բավարարվում է արձակագրի բարձր վարպետությունը ցուց տալով ու հիմանալով և ժամանակի պարտադիրանք կերծ կանխադրույթը պատմվածքում անտեսելով<sup>10</sup>:

<sup>8</sup> Շահինեան Գ.ր., Գորգին Մահարի, Պլյուր, 1964 թ., էջ 135:

<sup>9</sup> Նկարագրի առումով թերևս նրա գույքանուն է արձակագրի մորական փաքի կնրպարը «Մանկություն» և «Այրվող այգեստաններ» սպիտակործություններում:

<sup>10</sup> Պապոյան Ա., Ծաղկած փշապարերի հայ արձակը, Ե., 1999 թ., էջ 36-55:

Ինչ մնում է Գ. Մահարուն, ապա կասկածից դուրս է, որ նրա պես պրատող, հետևողական ու «ինքնասածի» գրողը քաղաքական բռնությունների թեմատիկայում չէր կարող մնալ «Սև մարդը» պատմվածքի հարցադրումների և ընդգրկումների շրջանակներում։ Դրա վկայությունները եղան 1960-ականների ստեղծագործությունները՝ «Գիշեր», «Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքները, «Շաղկած փշալարեր» վիպակը։ Ստուգողական առաջին քայլերն արված էին, իսրուչովյան բարենորդիչ մթնոլորտը կայունանում և ավելի ամկաշկան խոսքի հնարավորություն էր ստեղծում։ Այս պայմաններում Գ. Մահարունը վագած ստեղծագործությունները կուտակված ասելիքի պողոթկումներ էին։ Ցավոք սրտի «Շաղկած փշալարեր»-ը Հայաստանում հանրության սեփականությունը դարձավ գրվելոց քաներեք տարի հետո՝ 1988 թվականին<sup>11</sup>։

Սրանք արդեն շատ ավելի նշանակալի ճեղքերումներ էին ոչ միայն Գ. Մահարու, այլև ընդհանրապես հայ գրականության համար։ Հանիրավի բռնադատված միլիոնավորների դատի պաշտպանությամբ արարված այդ գրականության ասելիքն ակնհայտ էր։ Այդ ակնհայտի մեջ անմիջապես նկատվեցին բովանդակության մի քանի էական բաղադրիչներ։ Առաջին հերթին կարևորվում էր ստեղծագործություններում ներկայացված կենսական հանգամանքների, մարդկային ճակատագրերի հավաստիությունը։ «Հուշապատումի ժամանին»<sup>12</sup> հնարներին դիմելն էլ պատահական չէր. այդպես Գ. Մահարու ստեղծագործությունները «գեղարվեստական վավերաթղթի»<sup>13</sup> արժեք էին ձեռք բերում, դառնում ստեղծագործություն «ապրված նյութի հետքերով»<sup>14</sup>։

«Սև մարդը» պատմվածքը մի քանի չափազանց բնորոշ տեսարաններ ուներ, որոնք ընդհանուր պատկերացում էին տալիս տաժանակրության դատապարտվածների տառապալի գոյության վերաբերյալ։ Սակայն վերոհիշյալ երկու պատմվածքները և վիպակն ամբողջությամբ ներծծված են երկրային դժոխաքանակություններով, իրավագործկ բռնադատվածի «շեքսափիրյան ողբերգությամբ»<sup>15</sup>, որը մարդու ամենօրյա, ամեն պահի ստորացումն է ու ոչնչացումը։ Խսկապես, եթե Ծերսափիրի ողբերգությունները զգալի չափով նաև համաճարել մարդու ստեղծագործական երևակայության արդյունք են, ապա այս դեպքում դժոխային այդ կացության մտահղացողն ու իրականացնողը Ստալինն էր իր «դահճապետական վարչակարգով»<sup>16</sup>։ Այս ամենի հետ չի անտեսվել և այն, ինչին Գ. Մահարին էլ մի առանձին հետևողականությամբ հետամտել է ստեղծագործությունից ստեղծագործություն։ Խոսքը, ի տրիտոր անդադար բռնադատության, գեղեցիկը և մարդկային պահպանելու կալամավորների համար ու հետևողական շանքերի մասին է, թեև դրանք հաճախ ողբերգական լուծումներ էին ունենում<sup>17</sup>։

<sup>11</sup> Դրանից առաջ վիպակը երկու անգամ փափարվել էր Բևորություն «Նախրի» շարաթաթերթում (1971-1972 թթ.) և գրքու (1986 թ.)։

<sup>12</sup> Արգումանյան Ս., Արդի հայ վեպը, հ. 5, Ե., 2004 թ., լ. 95:

<sup>13</sup> Նոյն գիրը, լ. 98:

<sup>14</sup> Պապոյան Ա., Շաղկած փշալարերի հայ արձակը, Ե., 1999 թ., լ. 12:

<sup>15</sup> Գասպարյան Դ., Ապրևու իրավունքը։ Տես Գուրգեն Մահարի, Շաղկած փշալարեր, Ե., 1988 թ., լ. 3-12:

<sup>16</sup> Արգումանյան Ս., Արդի հայ վեպը, հ. 5, Ե., 2004 թ., լ. 102:

<sup>17</sup> Պապոյան Ա., Շաղկած փշալարերի հայ արձակը, Ե., 1999 թ., լ. 133:

ԵՎ Ս. Արգումանյանը, և Ա. Պապյանը ճշմարտացիորեն նկատում են, որ Գ. Մահիառը՝ 1960-ականների տաժանակրության թևմատիկայի ստեղծագործություններում հաստատվել էր նոր որակ, որը չէր կարող լիարժեք դրսուրվել 1950-ականների պատմվածքներում։ Որակական այդ տարբերությունների մեջ նրանք առանձնացնում են կենսական նյութի անկաշկանդ ընդգրկումը, ճշմարտության լիարժեք բացահայտումը և արտացոլված կենսական իրականության քաղաքական իմաստավորումը։ Մանավանդ Վերջինը՝ «տուալիզմի մարդարարությաց քաղաքականության»<sup>18</sup> մերկացումը եւական քայլ էր նյութի գեղարվեստական իմաստավորման ճանապարհին։ Ա. Պապյանը խնդիրը դիտարկում է քիչ ավելի մանրամասն և Գ. Մահիառը արձակը հատկապես Ալ. Սոլժենիցինի ստեղծագործության հետ համեմատությամբ։

Այս դեպքում մեզ հետաքրքրողը ոչ թե երկու հետինակների համարունչ ստեղծագործությունների ժամրային ու գեղարվեստական տարբերակված առանձնահատկություններն են, այլ արտացոլված իրականության հետինակային գնահատականները։ Ա. Պապյանը տարբերությունը ճշմարտացիորեն մատնանշում է երկու հետինակների քաղաքական ընդգրկումների ոլորտում։ Սակայն 60-ականների Մահիառին ավելի մոտ է Սոլժենիցինին «ուղղակի «հարձակումներով», տեղ-տեղ ճակատային սուր մերկացումներով»։ Այսուհետև՝ «անգամ առանձին դեպքերում, հակառակ իր ստեղծագործական մոտեցումների, Մահիառին բացորոշ «քաղաքականացնում» է դեպքերն ու հերոսներին, անթաքուց արտահայտում իր կողով վերաբերմունքը, բողոքն ու ատելությունը բռնության ու անհրավության դեմ»<sup>19</sup>։

Հասարակական կյանքում, մարդկային նկարագրում արմատացած ու անընդգրկելի ոլրեգությունների հասցրած չափը քաղաքական արարական գործընթացում է Ա. Պապյանը՝ ամենն իհարկե ճիշտ է և ցուց է տալիս իրականության արատների ընդգրկման, պատճառաբանության և գնահատման այն սահմանը, որին հասել է Գ. Մահիառին։ Դրանք հաճախ այնքան բացահայտ են ասվում, որ նոյնիսկ հնարավոր է չէ չմկատել։ Սակայն ինչքան էլ խիստ լինեն ցավի ու տառապանքի, բողոքի ու ընդվզման պատկերները, կրքու՛ հասցեագրված մեղադրանքները, միևնուն է, մնում են պաշտոնապես թուլլատրվածի սահմաններում։ Բայց հանդիրավի բռնադատվածների իրավունքների պաշտպանության առումով նշանակալի այս գրականությունը չարիքի բացահայտման և պատճառների մատնանշման մեջ նոյնիսկ սովետականորեն թուլլատրելիի սահմաններում էլ ունի ուշարժան առանձնահատկություններ, որոնք պետք է նկատի ունենալ։

Նախ՝ հանգուցալուծումները։ Եթե «Գիշերը» պատմվածքում նոյնիսկ լավատեսություն կա («Ես գիտեմ, որ կրացվի մեծ առավոտը» (5,293), ապա դա ընդամենը վերացական, չպատճառաբանված այն հույսն է, որ կարող է փայտայել մարդն անգամ ամենածանր կենսական հանգամբներում։ Դրա համար էլ այն չի հնչում որպես պատասխան պատմվածքի առանցքները դարձած հարցերի։ «Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքի հերոսի անփառումակ մահն ու թաղումն ընդհանրապես ազգային հարցի դատա-

<sup>18</sup> Արգումանյան Ս., Արդի հայ վեպ, հ. 5, Ե., 2004 թ., էջ 90։

<sup>19</sup> Պապյան Ա., Ծաղկած փշապարնի հայ արձակը, Ե., 1999 թ., էջ 21։

<sup>20</sup> Նոյն փեղը, էջ 82։

պարտվածությունն է խորհրդանշում խորհրդավիճ կարգ ու դրվածքի պայմաններում<sup>21</sup>:

«Ծաղկած փշալարեր» վիպակի ավարտը<sup>22</sup> («Իսկ ես մարդ տեղովս հուսահատվել եմ» (5,246) անհուսության, դատապարտվածության ուղղակի խոստվանություն է: Ակնհայտորեն երևում է, որ այս ստեղծագործություններին բնորոշ չեն ավարտի հուսադրող այն տարրերակները, դրական սպասելիքի այն ակնկալիքները, որոնք հանդիպում են նախորդներում: Գ. Մահարին ստեղծում է անհուս ողբերգականության մի մժենորտ, որը բացառում է ժամանակի գրականությանը բնորոշ և իր նախորդ պատմվածքներից մեզ ծանոթ բարոյահոգերամական հանգուցալուծումների տարրերակները (Սանոյի Վերափոխումը, «Խողի տնտեսությունը» (3, 297) կարգի բերելու կոչը):

Այս ստեղծագործությունների մյուս կարևոր առանձնահատկության մասին ազատորեն կարելի է խոսել մեր օրերում: Դա այլ է, որ Արանց գաղափարական ընդգրկումը դուրս է գալիս հեղինակի աշխարհայացքի և ստեղծագործական նպատակադրման սահմաններից: Ավագին հասու լինելը դժվար չէ, եթե ուշադիր հետևենք խնդրո առարկա ստեղծագործությունների բովանդակության օբյեկտիվ տրամաբանությանը:

Ամենաակնհայտը և էականը, որ բազմից մկանվել ու ընդգծվել է, ճամբարային դժվարքն է, որի մեջ հայտնվել են անմեղ, համիրավի պատժված մարդիկ: Ցուրաքանչյուր հերոսի ճակատագիրը, տաժանակրության կյանքի ամեն դրվագը մի ողբերգություն է, իրական, անընդգրկելի ողբերգություն: Այդ պայմաններում, չնայած հատ ու կննտ հաջողությունների, ոչնչանում է մարդն ու մարդկայինը, գոյությունը զրկվում իմաստից: Ազատության մեջ կյանքի շատ իրողություններ, որ իմաստավորվել են գեղեցիկի սկզբունքներով, առօրեականությունը լցոն ոգեղենությամբ, ճամբարում կամ արժեզրկվում են, կամ վերածվում զուտ ֆիզիկական տաճախի պահանջմունքի: Բոնադատվածների ճամբարները լավ մտածված և անխափան կառավարվող «Բոնուր ու մարմնավոր.... սպանանցներ» (5, 107) են: Մշտական քաղցը, ամեն պահ գնդակահարվելու սարսափը, ֆիզիկական ու բարոյական անվերջ ստորացումները ստեղծում են գոյության միանգամայն այլ արժեքներ, հնարավոր դարձնում անգամ ամենաանընդունելին: Արտակարգ ծանր կացությունը ձևավորում է նաև իր փիլիսոփայությունը՝ հակառակ առողջ տրամաբանության: «... որպան շատ դառնություն, այնքան լավ» (5, 121):

«Հիվանդ արդարություն» երկիրը երկատում, մանրացնում է թե՛ բանտարկյալներին, թե՛ ազատներին: Տարբեր կարգավիճակների այս մարդիկ ստիպված են հավասարապես ստեղ, կեղծեղ, հաճախ ասել ու ամել ոչ այն, ինչ մտածում կամ ցանկանում են: Հաս էության, ճամբարներից դուրս էլ մարդիկ նույն դժոխքում են: Լյուդմիլան ստիպված է վերանայել իր սկզբունքային պահվածքը՝ հաշվի առնելով գոյատնելու անհրաժեշտությունը և ազատության օրերի կենսափորձը. «Իսկ ազատության մեջ գտնվող քանդակագործներն

<sup>21</sup> Մշեցի Առաքելի մի փարբերակն լի Բայուց Ներում է: «Ծաղկած փշալարեր» վիպակում: Երկու կերպարներն լի մրամադացվել են 1965 թ. գրված սրբնագործությունների համար և համահուն լին Եղիսակի հիսունամյակի ասիրով գարթոնք ապրող ազգային ողուն ու պահանջափրկությանը:

<sup>22</sup> Այս սփնդագործության ատանձնահագույքուններից մնկն լի սյունեն և հեղինակային ասելիքի հարաբերակցության հարցն է: Թեև վիպակը կարող էր շարունակվել ներկայացնելով որոշ եղուսների հերփազ ճակապագիրը, սակայն ասելիքի առումով այն միանգամայն ավարտուն է:

ու Ակարիչները «սրտով և հոգով են քանդակում և նկարում նրա (Ստալինի - Ս. Ա.) բոյ-բուսաթը...» (5, 110): Հարցը հոետորական է, պատասխանը՝ միանշանակ. իհարկե ոչ: Երկաստված հոգևովինակի և կացության բնորոշ օրինակ է կալանավորներին հուսկող պահակներից Պետրովը: Թե՛ ազատության մեջ, թե՛ ճամբարներում մարդու պատեսակցում ու խորհապես ապրում է իր վիճակի ողբերգականությունը:

Երկաստվածությունը պաշտպանական հոգեկան մեխանիզմ է: Դա, ժամանակի պարտադրանքին հարմարվելով, վտանգից փրկվելու, կյանք և մահ երկրնտուանքի մեջ դեպի կյանքը կողմնորոշված լինելու վարքի դրսերում է: Դրա փիլիսոփայությունը համեմատական երշանկության միջանկյալ պատմության խորհրդան է: Իսկ ովեր շատ ամուր են կառչում իրենց ճշմարտությանը, չեն կարողանում գիշման գնաւ: Այդ դեպքում ձևավորվում է Մշեցի Առաքելի տարբերակը: Նա ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի է չընդունել, չհասկանալ կամ հաշվի չառնել անվիճարկելի ճշմարտությունները: Սա կործանման տանող «անհասկացողություն» է:

Եթե մի քիչ ավելի ուշադիր լինենք Գ. Մահարու ընդդրկած կենսական իրողությունների Ակատմամբ, ապա դժվար չի լինի մկատել նաև հետևյալը: Ծիշու է, «Ծաղկած փշալարեր», «Մշեցի Առաքելը և ուրիշները», «Գիշեր» ստեղծագործություններում ուղղակի մերկացվող գործն առավելապես ճամբարային է, սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ դրանցում հավասար չափով ներկա է և արտաճամբարային կյանքը: Գ. Մահարու դատապարտված ներումներից ոչ մեկը չի ծնվել ու մեծացել ճամբարում: Նրանք տառապում են այդտեղ, բայց եկել են «ազատությունից», բռնադրատվել են «ազատության մեջ»: Նրանց կյանքի այդ շրջանի թեև հիմնականում դրվագային, բայց բռնադրատված խոսուն փաստերով լի պատկերները հանգեցնում են նույն եզրակացությանը. Կենսապայմանների տարբերությամբ հանդերձ՝ թե՛ բանտային, թե՛ «ազատ» կյանքը նույն դժոխքի բաղկացուցիչներն են:

Բնմության, սարդանքի ու սարսափի մժմուրտը առաջին պլան է մղում թափթփուկներին, գրանց համար հնարավոր դարձնում կյանքն ըստ իրենց ցածր, ստորաքարշ է ության ձևելը: Սրանք գիտակցեն, թե ոչ, ասես վրեժիների են լինում աշխարհից իրենց ոչնչություն լինելու, կյանքի որևէ այլ տեղում արժեք չլինելու համար: Քսամբեղի այս տեսակն արհամարհանքով կամ ծիծաղով ոչնչացնելի է, երբ կյանքի տերը չէ: Սակայն հակառակ իրավիճակում սրանց գոյությունն արդեն իսկ չարիք ու ողբերգություն է: Ճամբարների մեծ ու փոքր կառավարչները, բանտարկյալների մեջ սրանց քու մամեկավիկները (Խվան Բյուկով, Բեկլար Քալանթարով) մարդու ցածրության սահմաններն են:

Համատարած ու բազմաբնույթ այս ողբերգության մթնոլորտում է Գ. Մահարին ծավալում Լյուդմիլա և Մամո փոխարարակերությունը: Մասնագիտական գրականության մեջ այս պատմությունը գնահատվել է որպես «սիրո գեղեցիկ ասք»<sup>23</sup>, որպես սեր, որը կալանավորների ազատության պողոթկման սակավ հնարավորություններից մեկն է անզատության պայմաններում<sup>24</sup>: Հետաքրքիր է, որ Դ. Գասպարյանը փաստի մեկնաբանության մեջ խոսում է հիմնականում կալանավորների ֆիզիկական պահանջմունքների բավարարման

<sup>23</sup> Պապոյան Ա., Ծաղկած փշալարնի հայ արձակը, Ե., 1999 թ., էջ 143:

<sup>24</sup> Գասպարյան Դ., Ապրելու իրավունք: Տնի Գուրգեն Մահարի, Ծաղկած փշալարն, Ե., 1988 թ., էջ 9:

մասին, սակայն «Աեր» բառը երբեք չի առնում չակերտների մեջ: Ի՞նչ խոսք կարող է լինել սիրո մասին, եթե ամեն ինչ սկսվում է ֆիզիկական պահանջմունքից ու ավարտվում դրա մանավանդ պատահական բավարարությով: Կարծում ենք՝ Լյուդմիլա և Մամի փոխարարաբերությունը որպես սիրո ողբերգական պատմություն դիտարկելը օգալիորեն հեռացնում է պատկերի օրինակությունը: Որ այն ողբերգական է, ինարկել վիճարկելի չէ: Բայց ոչ միայն այն պատճառով, որ ավարտվում է նորաձնի մահով և մոր տառապանքներով: Ողբերգությունը հենց Լյուդմիլա և Մամի կապն է, փոխարարաբերության այն տեսակը, որ հաստատվում, հնարավոր է դառնում այդ երկուսի միջև: Եվ այն, որ այդ պատմության վերջում չնշնի տեղաշարժ է նկատվում Մամոյի աղքատ, եսասեր էության մեջ (նույնիսկ հեղինակն է դա զարմանքով ներկայացնում (5, 241), միևնուն է, դրանից իրողությունն իր բովանդակությունը չի փոխում:

Լյուդմիլա և Մամի համատեղումը ճամբարային կենսապայմանների պարտադրանք է, հնարավոր դարձած ամբանին: Գ. Մահարին հենց այդպես էլ ներկայացնում է: Ավելորդ շանք չպետք է գործադրել այդ պատմությանը սիրո ոռմանտիկ շաղախ ներարկելու համար: Այն ճամբարային ստվորական ողբերգություն է: Լյուդմիլան և Մամոն միանգամայն այլ աշխարհների մարդիկ են: Գ. Մահարին դա բազմիցս նկատել է տալիս: Լյուդմիլան արվեստագետն է՝ աշխարհի, կյանքի, իր հետ կատարվածի միանգամայն այլ ընկալումներով, որոնք հասու չեն. Մամոյին: Նրա հարզը լավ գիտեն (*«... այդ կինն իր քաշով ոսկի արժե...»* (5, 106) բրուտանոցի մյուս տղամարդիկ, որոնց կողքին այս մեկը (Մամոն) բոլոր առումներով ընդամենը խեղճություն է՝ կառապան՝ նկարագրի, ընկալումների ու վարքի բնորոշ սահմանափակություններով: Եվ իսկապես, *«... դժվար էր պատկերացնել ավելի անհարիր զոյզ, - աղբերշանցի կառապան և գերմանացի նկարիչ-քանդակագործութի...»* (5, 77): Գ. Մահարին չի գունազարդում իր հերոսին: Սեփական շահից դուրս ամեն ինչ անհարազատ է այս մարդուն, և հազիվ թե նա կարող է ապրել այն զգացումը (սեր), որն ամենից առաջ հենց այլասիրություն է: Բրուտանոցի տղամարդկանցից յուրաքանչյուրն ավելի հավանական ու համապատասխան զուզընկեր է Լյուդմիլային, քան Մամոն: Բայց նա ակտիվացած Մամոյին չի վաճում: Ամեն ինչ շնչած բանտային կյանքը բոլորի առաջ մի զերխնդիր էր դրե՛ գոյատնել ամեն զնով: Մամոն այդ տեղում մյուսների համեմատ ամենահետևողականն է: Իսկ Լյուդմիլան օգնության կարիք ուներ հենց գոյատնաման խնդրում: Գերմանուրու հետ հաղորդակցվելն անգամ բավական ծանր գործ է հրա համար. հեղինակը չի տալիս հրանց մեջ հոգեկան կապի որևէ նկարագիր: Իր համար դժվար, անհասկանալի պահերին (դրանք կա'ն հոգեկանի դրսւորումներ են, կա'ն որոշակի իմացություն են պահանջում) միշտ անճարակ է, չի կարող իրավիճակից զուխ հանել առանց Աշուտ դայու օգնության: Մամոյի հոգեկան ու մտավոր խեղճությունն առավել նկատելի է բրուտանոցի մտավորականների միջավայրում, ուր ակամա հայտնվել է:

Առկա իրավիճակն ինքն էլ հուշում է երկուատեք վարքի հավանական տարբերակներից մեկը: Ամեն ինչում լրջորեն հաշվեմկատ Մամոն հրանց բաժին է հատկացնում իր հոգապահուստ սմներից, և կիսաքաղ Լյուդմիլան էլ վարձահատուց է լինում, ինչպես միայն կարող է կիմը: Սա սեր չէ, ճամբարային կյանքի բազմաթիվ պարտադրանքներից մեկն է, ճարարատ ընկերակցության: Այլապես Լյուդմիլան ամեն կերպ կաշխատեր թաքցնել երե-

խաղի հոր ով լինելը՝ մանավանդ լավ գիտեր, որ դրանից ինքը ոչինչ չէր շահելու, բայց Մամոն պատժվելու էր:

Չպետք է գումազարդել այն, ինչ Գ. Մահարին Աերկայացնում է միանգամայն նյութական պայմանավորվածությունների ձևով: Ըստ որում, հետինակի տարրերակը շատ ավելի համոզիչ է կալանավորների կենսապայմանների առումով: Ընդամենը ֆիզիկական պահանջմունքների բավարարման մակարդակով դրակորվող սեղերի փոխարարերությունը ճիշտ այդպես Աերկայացնելով էլ Գ. Մահարին ցուց է տալիս, որ անմեռ դատապարտվածների վիճակը շատ էր հեռու մարդկային լինելուց: Նրանք առավելագույնը կարող էին փորձել պահանջել իրենց գոյությունը մարմնական-բնական մի քանի պահանջմունքների կիսատ-պոտա բավարարման ձևով: Իսկ եթե ոգու և ոգողինության պողործումներ էլ են լինում, ապա կա'մ շատ զգուշավոր, կա'մ խասորեն պատժվող, կա'մ էլ ուղարկի այդ գոյակերպից հուսահատական ընդվզման տեսք ունեն, և այդ պատճառով էլ ընդվզողի համար ավարտվում են ողբերգականորեն: Լյուիմիլայի և Մամոնի փոխարարաբերություններին բնորոշ չէ ընդվզումը, ոգեղենությունը, զուզը Աերկայացների համարժեքությունը: Նրանց ընկերակցությունը պարտադրված է ու առաջին հերթին դրանով էլ ողբերգական:

Գ. Մահարու Վերոիիշյալ ստեղծագործությունների առաջին պլանում ողբերգությունը կրողներն են: Սակայն անտեսված չեն նաև այն իրականացնողները: Դրանք միշնորդավորվածությամբ (բռնադատվածների վերհուշի միջոցով) Աերկայացող կերպարներ են՝ պաշտոնայներ, իրավաբաններ, պետական քաղաքականությունն իրագործողներ, անվտանգության համակարգի Աերկայացուցիչներ: Սրանք անհոգի կատարողներ են, անմրցելի վարպետներ՝ չունեցած մեղքերը մարդկանց խոստովանել տալու գործում: Հասկանալի է, որ նրանց գործելու միակ ամիսական մեթոդը միշնադարյան հավատաքննությունն է: Մարդկության պատմության մեջ իր մասշտաբներով նախադեպը չունեցող «մարդամթերման» (5,167) (սեփական երկրում) գործը հաջողությամբ գույս բերած մարդիկ են սրանք: Այնքան վայրենաբար է նրանց գործունեությունը, որ ճամբարի սպանիչ տառապանքից անգամ մերձիմասի հերոսի հիշողության մեջ չի խամրում իր հարցաքննության մղջավանքը («Գիշեր»): Բոլոր հերոսների անցած Գողգոթայի այդ ճանապարհի ամենամանրակրկիտ նկարագիրը տրվում է հետինակի օրինակով՝ ձերբակալության օրվանից մինչ ճշանակման վայրը՝ ճամբարը<sup>25</sup>:

Գ. Մահարու բացահայտում-մերկացումներն էլ ավելի են լրջանում, երբ դրանց ոլորտում են հայտնվում նաև սովետական քաղաքական կարգի կարգախոսները: Հարցը միայն այն չէ, որ Գ. Մահարուն հաջողվում է տարրեր առիթներով (5, 189, 210, 221, 293) վարպետորեն հեգնել սովետական հումանիզմը և մարդու՝ ամենաթանկ կապիտալը լինելու հայտնի կարգախոսը: Այլ այն, որ նա, կամա թե ակամա, իր ստեղծագործությունների բոլոր էջերում հետևողականորեն ցույց է տալիս սովետական կարգի հակահումանիզմը և այդ երկրում մարդու ողբերգական արժեգործությունը:

<sup>25</sup> Այսպիսի պիտի նկարի ունենալ, որ ծերբակալության, երկու բարվա բանքային կյանքի և դնայի արտրավայր ճանապարհի նկարագիրը, որքան էլ մահարիական, համենայն դեպք, չունի մյուս հարվածների գեղարվստական հմայքը: Դա նշանակալի է առավելապես իրքն կենսագրական ժամանակագրության ձևով պատմական իրադրության փաստական, վախրագրական նյութ:

Թվուու է, թե մի վերջին եզրակացության համար ամեն ինչ ասված է շատ հիմնավոր ու ընդգրկում: Պետական մեքենան տասնյակ միլիոններով խռովում է սեփական ժողովրդին, իսկ երկիրը վերածվել է փաստացի բունադարվածների և դրա սարսափով գոյատևող ների ճամբարի: Մնաւ է միայն քաղաքական բովանդակության եզրակացությամբ դնել վերջակետը: Ըստերցողի համար այդ եզրակացությունը կասկածից դուրս է: Խորհրդային վարչակարգը բռնության, ոչնչացման մեջնան է և չունի գոյության իրավունք:

Հետաքրքիր է, որ Գ. Մահարին իր ընթերցողին հասցնում է այս եզրահանգմանը, բայց ինքը մնում է պրածից մի քայլ ետ: Արձակագրի բռնած գաղափարական դիրքորոշումը համարժեք չէ իր իսկ վկայած կենսական ճշմարտությանը: Դա պաշտոնապես օրինականացված քննադարտության, մերժման, ամեն վատի պատճառի մատնանշման թույլատրելի սահմանն է: Մեղավոր է անհատը, զրա նկատմամբ բորբոքված պաշտամունքը և նման այլ բաներ: Այդ անհատը «ծանր, երկաթե սապոզմերով» ոտքի տակ է առել միլիոններին (5,95), իսկ հլու-հնազամն կամակատարմերն ամենուր իրագործում են զրա հրամանները: Նա երկիրը կառավարում է «խտիկների վրա նատած» (5,253) և իր գործով շատ նման է մշեցի այն Տիգրանին, ով ոչխարի գլուխ էր խորովում-ծախում նախապես համելով ուղեղն ու լեզուն: Հետաքրքիր է նաև, որ Գ. Մահարին, բռնադատող անհատի և տեղերում քաղաքականությունն իրագործող «դահճապետական վարչակարգի»<sup>26</sup> կապը ցույց տալով է, մեղքի ակունքը միայն անհատի մեջ է տեսնում: Մեր օրերում անհամեմատ ավելի հեշտ է այս մասին դատողություններ ամելլ: Սակայն անհնար է և անտեսել Գ. Մահարու հերոսի քաղաքական անչափելի միամտությունը, կույր հավատը, որը բնորոշ էր ժամանակաշրջանին: Գնդակահարության դատապարտվածները բանտախցի պատերին խզմգում էին կեցցեներ «մեծ ղեկավարին» (5, 184), «Լեմինի կուսակցությանը» (5, 166): Ասես այդ ղեկավարը (Ստալին - Ս.Ս.) անտեղյակ էր երկրում տիրող իրավիճակից, Լեմինի կուսակցությունից չէր, կամ էլ կուսակցությունն ու կուսակցականներն էին անմասնակից երկրում տեղի ունեցողին:

Իրականում իհարկե այդպես չէր: Ստալինիզմը (մի բան, որ առանց դժվարության ապացուցվում է հիմա) որոսական ծայրահետ հեղափախականության, կոմկուսի և պետության ղեկավար կազմի գաղափարական ու ամենօրյա գործունեության սկզբունքային սխալների օրինաչափ արդյունք էր<sup>27</sup>:

Մոտի անսպասելի շրջադարձի, երկիմատ խոսքի, միտումնավոր թերասացությամբ<sup>28</sup> վարպետ Գ. Մահարին խորհրդային քաղաքական կարգի ոգու բացահայտման ինքնատիպ պատկեր է ստեղծել: Կալանավորներից մեկը նույն խցում իր հետ մեկուսացվածներին տեղեկացնում է բռնությունների չափի, զնդակահարությունների, համակենտրոնացման ճամբարների մասին: Նախկին շրջկոմի քարտուղարը վրդովված առարկում է՝ ասելով, որ «դա պրովոկացիա է, որ նման հակամարդկային լազերներ գտնվում են հիտլերյան Գերմանիայում, ոչ սոցիալիզմի երկրում...» (5, 167):

Իսկ եթե դա «պրովոկացիա» չէ... Եվ ընթերցողն էլ գիտի, որ այդ ամենը եղել է: Ուրեմն...

<sup>26</sup> Արգումանյան Ս., Արդի հայ վեպը, հ. 5, Ե., 2004 թ., լ. 102:

<sup>27</sup> Զիակո Ա., Սրբավենիզմի ակունքները: Տնը «Նորք» ամս., 1989 թ., հ. 9:

<sup>28</sup> Գ. Մահարու արձակին բնորոշ այս հագիւամիշներն առանձին ուսումնասիրության հետաքրքիր կյութ են:

Մահարին իր ամումից ասած խոսքում կասկածի տակ չի առնում խորհրդային քաղաքական համակարգը: Նա ամհատի քննադատության սահմաններում է բացահայտում, մերժում, մորուցում, հարցադրում:

Սակայն այս սահմաններում էլ Մահարին կամա-ակամա քաղաքական խնդիր է առաջադրում իր լնիթերողին: Այնքան մասշտաբային է նրա ներկայացրած ողբերգությունը, որ սկսում են կասկածել ամհատի պատմական դերի վերաբերյալ խորհրդային զաղափարախոսությամբ: Եթե ամհատի դերը կարող է ճշգնակալի լինել միայն հասարակական հաստինացած գործընթացներին համընկնելու դեպքում, ապա Ստալինի հետ պատասխանատվությունը հավասարապես նաև խորհրդային քաղաքական համակարգին է: Իսկ եթե ամհատը կարող է միայնակ հարթել երկրի, ժողովորի պատմական ընթացքի ուղին, ուրեմն սիսակ է ամհատի դերի և պատմական ընթացքի տրամաբանության փոխհարաբերության վերաբերյալ խորհրդային զաղափարախոսությունը:

Եթե անտեսներ բռնատիրության պատճառի բացատրության պետական-պաշտոնական մեկնաբանությունը, որի սահմաններում է մնում նաև Գ. Մահարին, և հետևենք ստեղծագործությունների բովանդակության օբյեկտիվ տրամաբանությամբ, ապա պիտի նախընտրենք Վերոհիշյալ՝ եզրակացություններից մեկը: Որն էլ նախընտրենք, չի լինելու հօգուտ խորհրդային քաղաքական կարգի կամ նրա զաղափարախոսության:

Այժմ, տասնամյակների հետավորությունից հժվար է վատահ ու միանշանակ պնդել, թե որտեղ է ավարտվում Գ. Մահարու ատելծագործական անկեղծությունը և որտեղից սկսվում տուրքը ժամանակի հրամայականին: Մի բան անառարկելի լինեն ակնհայտ է: այս ստեղծագործությունները, թեև հաճախ երգիծանքով շաղախուն, ցավի ու մորմորի, տառապանքի ու բողոքի գրականություն են: Սակայն այս մթնոլորտում էլ չի տեղավորվում «հներակենսագրական»-ում սեփական կյանքի ուղուն արձակագրի տված անվարան զնահատականը (ներև երկրորդ կյանքի հնարավորություն լիներ, ապա կապրել ճիշտ այնպես, ինչպես որ ապրել է (1, XIX): Զե՞ որ, ով-ով, բայց ինքը շատ բան էր կորցրել թե՛ դարավորգին, թե՛ խորհրդային տարիներին: Այլ բան ասելու համար աչքը տեսածի<sup>9</sup> էր վախնեում, թե՞ ուղարկի նպատակահարմար է համարել կամ անկեղծուն նախընտրել է այդ ժամանակ (1963 թ.) շատ հարցի սովետականուն լավատես լինելը:

Ինչու, անկաակած ճիշտ է, որ «Արվեստագետի նրա աշխարհը իրականում շատ ավելի բարդ էր, դրամատիկ, տատանումներով լեցուն»<sup>29</sup>: Մնում է միայն հուսալ, որ «Մահարի փշալարեր-ն է արտահայտում գրողի վերջին համոզմունքն իր ապրած կյանքի ուրախությունների ու դառնությունների, իմաստավոր և անիմաստ տանով տրված տարիների վերաբերյալ: Որովհետև վիպակը գրվել է «հներակենսագրական»-ից երկու տարի հետո՝ 1965 թ.:

<sup>29</sup> Գրիգորյան Ս., Թանախրություն և բանավեճ, Ե., 2002 թ., էջ 74: